# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2022 թվական N 72-Ա

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685–րդ հոդվածով, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19052022-04-0085 վկայականը,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արաքս համայնքի Լուսագյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1258.1գծմ գազատարը, որից ցածր ճնշման գազատար D108մմ=663.1գծմ, D57մմ=595.0գծմ և 217 հատ հենասյուները, որից 99 հատ D=89մմ, 114 հատ D=57մմ, 4 հատ D=76մմ, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնհինգօրյա ժամկետում ապահովել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ որոշմամբ նշված գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագրի կնքումը՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվելու են «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:
3. Սույն որոշման 2–րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետով նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝ կողմ-11 դեմ- ձեռնպահ-

1. Ղազարյան Ղազար
2. Հարությունյան Վահրամ
3. Համբարյան Մելանյա
4. Նահապետյան Տիգրան
5. Շահինյան Շահեն
6. Մնացականյան Գայանե
7. Վարդանյան Գեղամ
8. Ղուկասյան Արմեն
9. Մակարյան Մարյամ
10. Մարտիրոսյան Նարեկ
11. Արասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հունիսի 29
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2022 թվական N 73–Լ

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10–րդ հոդվածի 4–րդ մասով, 13–րդ հոդվածով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արաքս համայնքի աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի 1–ի:
2. Հաստատել Արաքս համայնքի 2022 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 2–ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Ավագանու անդամներ՝ կողմ- 11 դեմ- ձեռնպահ-**

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**
4. **Նահապետյան Տիգրան**
5. **Շահինյան Շահեն**
6. **Մնացականյան Գայանե**
7. **Վարդանյան Գեղամ**

8. Ղուկասյան Արմեն

9. Մակարյան Մարյամ

10. Մարտիրոսյան Նարեկ

11. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հունիսի 29

Արաքս համայնք

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 29-ի N 73-Ա որոշման

# ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձանց (ներառյալ անհատ ձեռնարկատեր և արտոնագրային վճար վճարող), իրավաբանական անձանց, հիմնարկների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալի, անհատույց օգտագործողի վրա:
3. Աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներ են՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:
4. Աղբահանությունը վճարովի ծառայություն է:
5. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացնողները ազատվում են աղբահանության վճարից, եթե նշված աղբը փոխադրվում և տեղադրվում է սեփական միջոցներով՝ համապատասխան թույլտվության հիման վրա կամ համապատասխան անձանց հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:
6. Համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:
7. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակները և գործընթացի կազմակերպման սկզբունքներն են՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.
2) բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.

3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից.

4) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

## 2. ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՊԱՀՄԱՆ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

8. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

9. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ու շինություններից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50մ հեռավորության վրա:

11. Աղբամանները տեղադրվում են բնակելի (առկայության դեպքում) և հասարակական շենքերի ու շինությունների բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցների մոտեցման համար հարմար դիրքով: Աղբամանները չեն տեղադրվում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:

12. Աղբը պետք է փոխադրվի մինչև աղբամանների ամբողջությամբ լցվելը:

13. Աղբահանությունը իրականացնում են մասնագիտացված և (կամ) օրենքով չարգելված այլ կազմակերպություններ:

14. Կոնտեյներներից կամ աղբամաններից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը:

15. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից՝ ախտահանիչ լուծույթներով:

16. Աղբամանները տեղադրվում են ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, շուկաներում և այլն:

17. Կրպակներում առևտուր իրականացնող սուբյեկտները իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում:

18. Բնակելի շենքերի (առկայության դեպքում) առաջին հարկերում տեղակայված առևտրի և սպասարկման օբյեկտների մուտքերի հարակից տարածքները պահվում են պատշաճ սանիտարական վիճակում, չեն կուտակում ապրանքների արկղեր կամ

ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

19. Չի թույլատրվում՝

1) աղբը պահել և թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում

2) սպառման թափոնների այրումը,

3) խոշոր եզրաչափի աղբ (երկու և ավելի քառակուսի մետր զբաղեցնող խոշոր կենցաղային և ոչ կենցաղային սարքավորումներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ կամ այլ նմանատիպ իրեր) թափելը,

3) մարտկոցներ, էլեկտրական կուտակիչներ, էլեկտրալամպեր, էլեկտրոնային ապրանքներ, գրաֆիտային էլեկտրոդներ թափելը,

4) կենսաբանական թափոններ (կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ) թափելը,

5) շինարարական աղբ թափելը,

6) անվադողեր թափելը (բացառությամբ հեծանվի դողի),

7) տրանսպորտային միջոցից աղբ նետելը,

8) աղբի համար նախատեսված վայրում տեղադրել սատկած կենդանու մարմին:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 29–ի N 73-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ

| հ/հ | Արաքս համայնքի բնակավայրերի անվանումները | Ծառայության իրականացման շրջանակը | Ծառայության իրականացման օրը | Ընդհանուր երթուղու երկարությունը (առանց աղբավայրի ուղեգծի ) | Բնակչության թիվը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ակնաշեն գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը | 12 կմ | 1743 |
| 2. | Ապագա գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը | 17 կմ | 1997 |
| 3. | Առատաշեն գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի օրը | 17 կմ | 2956 |
| 4. | Արաքս գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը | 16 կմ | 1773 |
| 5. | Արտիմետ գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա կիրակի օրը | 14.5 կմ | 1924 |
| 6. | Գայ գյուղ | Աղբի հավաքում և | Յուրաքանչյուր | 65 կմ | 3759 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | շաբաթվա շաբաթ օրը | | |
| 7. | Գոհրյեռով գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի օրը | 12 կմ | 2057 |
| 8. | Լուսագյուղ գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը | 13 կմ | 1024 |
| 9. | Խորոնք գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի օրը | 17 կմ | 2754 |
| 10. | Հայկաշեն գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա շաբաթ օրը | 12 կմ | 1292 |
| 11. | Մեծամոր գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրը | 15 կմ | 1292 |
| 12. | Ջրառատ գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի և կիրակի օրերը | 18 կմ | 3350 |
| 13. | Ջրարբի գյուղ | Աղբի հավաքում և տեղափոխում յուրաքանչյուր տնտեսությունից և հիմնարկ-ձեռնարկություններից | Յուրաքանչյուր շաբաթվա կիրակի օրը | 6.2 կմ | 1679 |
| | • **Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը, աղբի հավաքման, տեղափոխման, տեսակավորման, վնասազերծման և պահպանման աշխատանքները համակարգվում** | | | | |

| | |
|---|---|
| | են Ա/Ձ «Արթուր Քարտաշյան»-ի կողմից՝ ի դեմս տնօրեն Արթուր Քարտաշյանի: |
| • | Աղբահանությունն իրականացնել օժանդակ բանվորի օգնությամբ: |
| • | Կուտակված աղբը տեղափոխել աղբավայր աղբատար մեքենայով: |
| • | Աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանված է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N10-Ն որոշմամբ: |
| • | Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեից. աղբահանության համար՝ 33.000.000 (երեսուներեք միլիոն) դրամ, սանիտարական մաքրման համար՝ 7.500.000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ: |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ. ՝ (093)554477

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2022 թվականի N 74-Ն

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 7–ի N 13–Ա կարգադրությամբ ստեղծված գույքագրման կենտրոնական և աշխատանքային հանձնաժողովների կողմից Արաքս համայնքի վարչական տարածքներում իրականացված առկա գույքի գույքագրման արդյունքները.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արաքս համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը 2022 թվականի հունիսի 1–ի դրությամբ /ներառյալ փոքրարժեք և արագամաշ գույքը՝ համաձայն N 1 - N **5** հավելվածների:
2. Սույն որոշման 1–ին կետով հաստատված գույքային միավորները, ըստ վարչական շրջանների գույքերի, ի պահպանություն են տրվում վարչական ղեկավարներին, իսկ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքը՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ավագանու անդամներ՝ կողմ- 11 դեմ- ձեռնպահ-**

1. **Ղազարյան Ղազար**
2. **Հարությունյան Վահրամ**
3. **Համբարյան Մելանյա**

4. Նահապետյան Տիգրան
5. Շահինյան Շահեն
6. Մնացականյան Գայանե
7. Վարդանյան Գեղամ
8. Ղուկասյան Արմեն
9. Մակարյան Մարյամ
10. Մարտիրոսյան Նարեկ
11. Աբասյան Արայիկ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հունիսի 29
Արաքս համայնք

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ավագանու
2022 թվականի հունիսի 29-ի
N 74-Լ որոշման

# ՑԱՆԿ

## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ/ՆԵՐԱՌՅԱԼ ԱՐԱԳԱՄԱՇ ԵՎ ՓՈՔՐԱՐԺԵՔ ԱՌԱՐԿԱՆԵՐ/

Արաքսի համայնքապետարանի աշխատակազմ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ

| h/h | Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման (կառուցման) տարեթիվը | Ձեռքբերման տարեթիվը | Համարը | | Փաստացի (քանակը) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գույքային | Գործարանային | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | **ԱՐԱՔՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ** | | | | | | |
| 1) | Երկաթյա պահարան մեծ | | 2003 | | | 1 | |
| 2) | Երկաթյա պահարան փոքր | | 2003 | | | 3 | |
| 3) | Երկաթյա պահարան | | 2003 | | | 1 | |
| 4) | Խոլ 3 կտորից | | 2009 | | | 1 | |
| 5) | Ժուռնալի սեղան | | 2009 | | | 1 | |
| 6) | Փոքր պահարան | | 2009 | | | 1 | |
| 7) | Տնօրենի սեղան | | 2009 | | | 1 | |
| 8) | Կախույք պրոֆիլով, ապակիով | | 2009 | | | 1 | |
| 9) | Միջանցքի պահարան | | 2009 | | | 1 | |
| 10) | Ղեկավարի աթոռ | | 2009 | | | 1 | |
| 11) | Աշխատանքային աթոռ | | 2009 | | | 6 | |
| 12) | Համակարգիչ՝ LOC | | 2013 | | | 1 | |
| 13) | Համակարգիչ | | 2013 | | | 2 | |
| 14) | Պրինտեր՝ SAMSUNGSC3405 | | 2013 | | | 1 | |
| 15) | Էլ. ջեռուցիչ՝ LUXSELL | | 2014 | | | 1 | |
| 16) | Համակարգչային սեղան | | 2014 | | | 4 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 17) Բազմաֆունկցիոնալ տպիչ՝ CANON | | 2016 | | | 2 | |
| 18) Լվացարան կերամիկա՝ ELIT | | 2016 | | | 1 | |
| 19) Ժամացույց պատի | | 2016 | | | 1 | |
| 20) Հայելի | | 2016 | | | 1 | |
| 21) Լինոլյում | | 2017 | | | 54քմ | |
| 22) Համակարգիչ G1610 | | 2018 | | | 1 | |
| 23) Բռնցքամարտի տանձ մեծ | | 2018 | | | 1 | |
| 24) Գրենական պիտույքների կոմպլեկը | | 2018 | | | 1 | |
| 25) Ստեպլեր | | 2018 | | | 1 | |
| 26) Ջահ 3 հատանոց | | 2018 | | | 1 | |
| 27) Ջահ 5 հատանոց | | 2018 | | | 1 | |
| 28) Բռնցքամարտի ռինգ 20,25քմ. | | 2018 | | | 1 | |
| 29) Թենիսի սեղան | | 2018 | | | 1 | |
| 30) Թենիսի ցանց ռակետով | | 2018 | | | 1 | |
| 31) Օդորակիչ՝ MIDEA MT 18N1C4 | | 2019 | | | 2 | |
| 32) Համակարգչի կոմպլեկտ | | 2019 | | | 1 | |
| 33) Հոսանքի անխափան սնուցման սարք՝ MERCURY | | 2019 | | | 1 | Անսարք |
| 34) Խոտհնձիչ | | 2020 | | | 1 | Անսարք |
| 35) Օդորակիչ՝ ZANUSSI | | 2021 | | | 1 | |
| 36) Տաքացուցիչ 2,3կվտ | | 2021 | | | 1 | |
| 37) Համակարգչի մկնիկ | | 2021 | | | 2 | |
| 38) Համակարգչի ստեղնաշար | | 2021 | | | 2 | |
| 39) Հոսանքի անխափան սնուցման սարք՝ SMART 1000 | | 2021 | | | 1 | |
| 40) Հոսանքի անխափան սնուցման սարք | | 2021 | | | 1 | |
| 41) Լեդ լուսատու 50վ | | 2021 | | | 76 | |
| 42) ՀՀ զինանշան | | 2014 | | | 1 | |
| 43) Կրակմարիչ | | 2014 | | | 2 | |
| 44) Գրենական պիտույքների կոմպլեկտ | | 2016 | | | 1 | |
| 45) Հայելի | | 2017 | | | 1 | |
| 46) Հովհարող սարք/Վինտիլյատոր | | 2017 | | | 1 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 47) | Գրչաման–ցանց | | 2017 | | | 2 | |
| 48) | Ցուցանակ | | 2019 | | | 2 | |
| 49) | Ցուցանակ | | 2019 | | | 1 | |
| 50) | Ցուցանակ | | 2019 | | | 6 | |
| 51) | Թեյնիկ ապակյա | | 2019 | | | 1 | |
| 52) | Հատակ մաքրող փայտ | | 2019 | | | 2 | |
| 53) | Հաշվիչ | | 2021 | | | 2 | |
| 54) | Դակիչ | | 2021 | | | 1 | |
| 55) | Կարիչ/ստեպլեր | | 2021 | | | 1 | |
| 56) | Հատակի ձողափայտ | | 2021 | | | 2 | |
| 57) | Էլ. թեյնիկ 1.5լ | | 2021 | | | 1 | |
| 58) | Էլ. սրճեփ | | 2021 | | | 1 | |
| **2.** | **ԱՊԱԳԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ** | | | | | | |
| 1) | Գազամուղի շենք | 1980 | | | | 1 | |
| 2) | Կապի հանգույցի շենք՝ 10,6 | 1982 | | | | 1քմ. | |
| 3) | Արտիզյան ջրհորներ | 1972 | | | | 23 | |
| 4) | Փողոցային լուսավորություն | 1978 | | | | 32 | |
| 5) | Դաշտային կամուրջ | 1960 | | | | 1 | |
| 6) | Կապի հանգույցի շենք | 1973 | | | | 1 | |
| 7) | Սեղան գրասենյակային 2 տումբայով | | 1996 | | | 1 | |
| 8) | Սեղան գրասենյակային | | 1996 | | | 1 | |
| 9) | Ճաշասեղան | | 2007 | | | 1 | |
| 10) | Խոլ | | 2007 | | | 1 | |
| 11) | Տնօրենի սեղան | | 2009 | | | 1 | |
| 12) | Բազմոց | | 2009 | | | 1 | |
| 13) | Ղեկավարի աթոռ | | 2009 | | | 1 | |
| 14) | Սուրճի սեղան | | 2009 | | | 1 | |
| 15) | Հեռուստացույց LG | | 2009 | | | 1 | |
| 16) | Չհրկիզվող պահարան/սեյֆ | | 2009 | | | 1 | |
| 17) | Գրասեղանի հավաքանի | | 2009 | | | 1 | |
| 18) | Երկաթյա պահարան/կասսա | | 1996 | | | 1 | |
| 19) | Բազմոց | | 2009 | | | 1 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20) Աթոռ | | 2007 | | | 3 | Ոչ պիտանի |
| 21) Համակարգչի փոքր սեղան | | 2007 | | | 5 | |
| 22) Պահարան մանկական | | 2007 | | | 1 | |
| 23) Աթոռ փափուկ | | 2009 | | | 2 | |
| 24) Սառնարան TOSHIBA | | 2010 | | | 1 | |
| 25) Զուգարանակոնք | | 2010 | | | 1 | |
| 26) Բարձրախոսի հենակ՝ MAX SF 08 | | 2013 | | | 2 | |
| 27) Ուժեղ. դեկ փոխ.՝ MAX MXP 3610 USB | | 2013 | | | 1 | |
| 28) Հեռուստացույց՝ SAMSUNG | | 2013 | | | 1 | |
| 29) Օդորակիչ՝ MITSUBISH11300KW320403 | | 2013 | | | 1 | Անսարք |
| 30) Ղեկավարի սեղան | | 2013 | | | 1 | |
| 31) Աթոռ | | 2013 | | | 12 | |
| 32) Պահարան/ստենկա | | 2013 | | | 1 | |
| 33) Մեծ սեղան | | 2013 | | | 1 | |
| 34) Պահարան լամ. ապակյա | | 2013 | | | 3 | |
| 35) Բազմոց/խոլ | | 2014 | | | 1 | |
| 36) Սուրճի սեղան ապակյա | | 2014 | | | 1 | |
| 37) Բազկաթոռ կաշվից | | 2014 | | | 1 | |
| 38) Համակարգչի մոնիտոր՝ SAMSUNG | | 2010 | | | 2 | |
| 39) Համակարգիչ՝ LG | | 2013 | | | 1 | |
| 40) Պատճենահանման սարք՝ Canon L11121E | | 2014 | | | 1 | |
| 41) Պատճենահանման սարք՝ Canon ML3010 | | 2014 | | | 1 | |
| 42) Ջրի պոմպ | | 2016 | | | 1 | |
| 43) Լվացարան | | 2016 | | | 1 | |
| 44) Նստարան | | 2016 | | | 5 | |
| 45) Աստիճան | | 2016 | | | 1 | |
| 46) Օդորակիչ՝ HAIER | | 2016 | | | 2 | |
| 47) ALQH | | 2016 | | | 2 | |
| 48) Թղթի դարակ | | 2010 | | | 1 | |
| 49) Գրասեղանի պիտույքների հավաքանի | | 2013 | | | 1 | |
| 50) Գրասեղանի թղթի դարակ | | 2013 | | | 1 | |
| 51) Ցուցանակ | | 2013 | | | 4 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 52) Շերտավարագույր | | 2013 | | | 8 | |
| 53) Ցանցային սարք | | 2014 | | | 1 | |
| 54) Կավրալիտ 112մ. | | 2016 | | | քմ | |
| 55) Աղբաման | | 2016 | | | 2 | |
| 56) ՀՀ գերբ | | 2016 | | | 1 | |
| 57) Նկարի շրջանակ | | 2016 | | | 14 | |
| 58) Վարագույր մետաքսից 35մ. | | 2016 | | | 1 | |
| 59) Բարձրախոս համակարգչի | | 2017 | | | 1 | |
| 60) Նասոս | | 2017 | | | 1 | |
| 61) Գրասեղանի պիտույքների հավաքանի | | 2017 | | | 1 | |
| 62) Դակիչ քանոնով | | 2018 | | | 1 | |
| 63) Երկաթյա պահարան/կասսա | | 1996 | | | 2 | |
| 64) Հաշվիչ | | 2019 | | | 1 | |
| 65) Թղթադարակ | | 2019 | | | 1 | |
| 66) Հաշվիչ | | 2019 | | | 1 | |
| 67) Ստեպլեր մեծ | | 2020 | | | 1 | |
| 68) Հաշվիչ | | 2020 | | | 1 | |
| 69) Համակարգչի ստեղնաշար | | 2020 | | | 1 | |
| 70) Համակարգչի մկնիկ | | 2020 | | | 1 | |
| 71) Դակիչ քանոնով | | 2020 | | | 1 | |
| 72) Համակարգչի ստեղնաշար | | 2020 | | | 1 | |
| 73) Ստեպլեր մեծ | | 2020 | | | 1 | |
| 74) Հեռահար ջերմաչափ | | 2020 | | | 1 | |
| 75) Համակարգչի մկնիկ | | 2020 | | | 1 | |
| 76) Համակարգչի ստեղնաշար | | 2020 | | | 1 | |
| 77) Հաշվիչ | | 2021 | | | 1 | |
| 78) Համակարգչի ստեղանաշար | | 2021 | | | 1 | |
| 79) Համակարգչի մկնիկ | | 2021 | | | 2 | |
| 80) Աղբաման ցանց | | 2021 | | | 1 | |
| 81) Պրոժեկտոր | | 2016 | | | 5 | |
| **3. ԱԿՆԱՇԵՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ** | | | | | | |
| 1) Գյուղապետարանի շենք | 1965 | | | | 1 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30) Գրասեղան համակարգչի | | | | | 1 | |
| 31) Շերտավարագույր | | | | | 27 | |
| 32) Տնօրենի սեղան | | | | | 1 | |
| 33) Համայնքի հասցեագրման հատակագիծ-քարտեզ | | | | | 1 | |
| 34) Անկյունակ բազմոց/փափուկ | | | | | 1 | |
| 35) Գրասենյակային հոլովակավոր աթոռ | | | | | 1 | |
| 36) Գրասենյակային հոլովակավոր աթոռ | | | | | 3 | |
| 37) Պահարան | | | | | 1 | |
| 38) Պահարան | | | | | 1 | |
| 39) Սառնարան SUPER GENERAL | | | | | 1 | |
| 40) Վառարան գազի | | | | | 2 | |
| 41) Վառարան գազի փոքր | | | | | 1 | |
| 42) Այգու նստարաններ | | | | | 9 | Փաստացի առկա է 5 հատ, 4 հատը գողացվել է |
| 43) Սեղան խաղասենյակի | | | | | 1 | |
| 44) Դահլիճի աթոռներ | | | | | 20 | |
| 45) Երկաթյա գրադարակներ | | | | | 32 | |
| 46) Գրքային ֆոնդ | | | | | 7315 | |
| 47) Ընթերցասեղան | | | | | 3 | |
| 48) Գրապահարան | | | | | 2 | |
| 49) Գրասեղան | | | | | 2 | |
| 50) Աթոռ | | | | | 5 | |
| 51) Նկար կտավից | | | | | 2 | |
| 52) Ջրի պոմպ | | | | | 1 | |
| 53) Այգու երկաթյա նստարան | | | | | 2 | |
| 54) Այգու երկաթյա խաղասեղան | | | | | 1 | |
| 55) Մետաղյա աղբաման | | | | | 4 | |
| 56) Հեռուստացույց | | | | | 1 | |
| 57) Նոութբուք Lenovo core i3 | | 2021 | | | 1 | |
| 58) Գրասենյակային օրգանայզեր | | | | | 1 | |
| 4. ԱՌԱՏԱՇԵՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1) ***Առափաշենի համայնքապետարանի շենք*** | | 2011 | | | 1 | |
| 2) Ջեռուցման համակարգ | | 2019 | | | 1 | |
| 3) Խմելու ջրի ջրագիծ | | 2010 | | | 11 կմ | |
| 4) Համակարգիչ | | 2010 | | | 2 | |
| 5) Լազերային տպիչ Canon | | 2011 | | | 1 | |
| 6) Մոնիտոր Samsung S19B150 | | 2013 | | | 1 | |
| 7) Մոնիտոր Envision 4819 | | 2013 | | | 1 | |
| 8) Համակարգիչ G1610 | | 2013 | | | 1 | |
| 9) Համակարգիչ Corel 33240 | | 2015 | | | 1 | |
| 10) Մոնիտոր Samsung 19c17013 | | 2015 | | | 1 | |
| 11) Մոնիտոր LG E1942 | | 2013 | | | 1 | |
| 12) Համակարգիչ INTEL G4900 Celeron /8Gen, 3.1 Ghz/ | | 2020 | | | 1 | |
| 13) Համակարգիչ INTEL i3-8100 /8Gen, 3.6 Ghz/ | | 2020 | | | 1 | |
| 14) Տպիչ CANON MF3010 | | 2020 | | | 1 | |
| 15) Մոնիտոր PHILIPS 243 V7QJABF/0024 /VGA, HDMI, DP/ | | 2020 | | | 1 | |
| 16) Սեղան/գրասեղան | | 2008 | | | 3 | |
| 17) Տրիմռ հայելիով | | 2008 | | | 1 | |
| 18) Գազօջախ klass KF6513 | | 2011 | | | 1 | |
| 19) Գազի հաշվիչ | | 2011 | | | 1 | |
| 20) Սեղան/գրասեղան | | 2011 | | | 5 | |
| 21) Սեղան դիմադիրով | | 2012 | | | 1 | |
| 22) Պահարան | | 2011 | | | 3 | |
| 23) Դուռ | | 2012 | | | 1 | |
| 24) Պահարան | | 2012 | | | 1 | |
| 25) Կրակմարիչ | | 2019 | | | 4 | |
| 26) Շերտավարագույր | | 2019 | | | 56 | |
| 27) ՀԾ 7 հաշվապահական ծրագիր | | 2019 | | | 1 | |
| 28) Չիրկիզվող պահարան | | | | | 5 | |
| 29) ՀՀ դրոշ | | | | | 1 | |
| 30) ՀՀ զինանշան | | | | | 1 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 31) Ցուցանակ | | | | | 1 | |
| 32) Mouse Toshiba | | | | | 1 | |
| 33) Դինամիկ Genius Sps-110 | | | | | 2 | |
| 34) Swich TL-SF 1005 | | | | | 1 | |
| 35) Պոմպ ԷՑՎ 8-40-40 | | | | | 1 | |
| 36) Պոմպ ջրի SHIMGE 4SP m 10/9-1.5 | | 2021 | | | 1 | |
| **5. ԽՈՐՈՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ** | | | | | | |
| 1) ***Խորոնքի համայնքապետարանի շենք*** | | | | | 1 | |
| 2) ***Գրասենյակի շենք*** | | | | | 1 | |
| 3) Տրանսֆորմատորի շենք | | | | | 1 | |
| 4) Տրանսֆորմատորի շենք | | | | | 1 | |
| 5) Գյուղ խորհրդի շենք | | | | | 1 | |
| 6) Նկար | | | | | 1 | |
| 7) Այգու նստարան | | | | | 8 | |
| 8) Չիրկիզվող պահարան /կասսա երկաթյա/ | | | | | 7 | |
| 9) Օդափոխիչ | | | | | 1 | |
| 10) Համակարգիչ | | | | | 1 | |
| 11) Համակարգիչ | | | | | 3 | |
| 12) Գրապահարան | | | | | 1 | |
| 13) Գրասեղան դարակով | | | | | 1 | |
| 14) Խալի /կավրալիտ/ | | | | | 100 քմ | |
| 15) Շերտավարագույր | | | | | 72,1 քմ | |
| 16) Բաքսի գյուղապետարանի շենքում | | | | | 1 | Ոչ պիտանի |
| 17) Հեռուստացույց | | | | | 1 | |
| 18) Սառնարան | | | | | 1 | |
| 19) Աթոռ | | | | | 1 | |
| 20) Գրասեղան | | | | | 1 | |
| 21) Համակարգչի սեղան | | | | | 1 | |
| 22) Սեղան դիմադիր | | | | | 1 | |
| 23) Պատճենահանման սարք /Xeroxs/ | | | | | 1 | |
| 24) Աթոռ | | | | | 9 | |
| 25) «Մաքուր ջուր» SUPER GENERAL | | | | | 1 | Անսարք |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 26) | Տպիչ | | | | | 1 | |
| 27) | Ջրի նասոս | | | | | 1 | |
| 28) | Աթոռ | | | | | 6 | |
| 29) | Օդորակիչ | | | | | 3 | |
| 30) | Մայրուղու սպասարահ | | | | | 5 | |
| 31) | Լվացարան | | | | | 2 | |
| 32) | Զուգարանակոնք | | | | | 1 | |
| 33) | Տպիչ | | | | | 1 | |
| 34) | Համակարգիչ | | | | | 1 | |
| 35) | Տպիչ Canon MF 3010 | | | | | 1 | |
| 36) | Փոշեկուլ Panasonic MCCG711 | | | | | 1 | |
| 37) | Ջեռուցման կաթսա Alital | | | | | 1 | |
| 38) | Էլեկտրական շչակ | | | | | 1 | |
| 39) | Գրքային ֆոնդ | | | | | 5798 | |
| 40) | Սեղան | | | | | 1 | |
| 41) | Մանկական սեղան | | | | | 2 | |
| 42) | Մանկական աթոռ | | | | | 5 | |
| 43) | Աթոռ | | | | | 5 | |
| 44) | Ցուցափեղկ | | | | | 2 | |
| 45) | Կատալոգի արկղ | | | | | 1 | |
| 46) | Գրապահարան | | | | | 2 | |
| 47) | Կառնիզ | | | | | 4 | |
| 48) | Գրքի երկաթյա դարակներ | | | | | 2 | |
| **6.** | **ՀԱՅԿԱՇԵՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ** | | | | | | |
| 1) | ***Հայկաշենի համայնքապետարանի գույք*** | | | | | | |
| 2) | Սեղան աշխատանքային | | | | | 6 | |
| 3) | Պահարան | | | | | 5 | |
| 4) | Սեղան համակարգչի | | | | | 2 | |
| 5) | Զինանշան | | | | | 1 | |
| 6) | Դրոշ տակդիրով | | | | | 1 | |
| 7) | Չհրկիզվող պահարան | | | | | 1 | |
| 8) | Աթոռ փափուկ | | | | | 12 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9) Համակարգիչ | | | | | 1 | |
| 10) Համակարգիչ | | | | | 1 | |
| 11) Էկրան | | | | | 2 | |
| 12) Ժապավենաշարային | | | | | 1 | |
| 13) Տպող սարք | | | | | 1 | |
| 14) Ցանցան կոնցենտրատոր | | | | | 1 | |
| 15) Համակարգչի մալուխ | | | | | 50 | |
| 16) Երկարացման հաղորդալար | | | | | 2 | |
| 17) Միացուցիչներ | | | | | 10 | |
| 18) Ամրակ | | | | | 1 | |
| 19) Մալուխ | | | | | 1 | |
| 20) Շչակ | | | | | 1 | |
| 21) Էլեկտրական հաշվիչ | | | | | 1 | |
| 22) Կառավարման բլոկ | | | | | 1 | |
| 7. **ՄԵԾԱՄՈՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ** | | | | | | |
| 1) ***Գրասենյակի շենք*** | | | | | 1 | |
| 2) ***Մեծամորի համայնքապետարանի շենք*** | | | | | 1 | |
| 3) Կոմպլեկտ 200 գլխի համար | | | | | 1 | |
| 4) Կամուրջ գերեզմանոցին կից | | | | | 1 | |
| 5) Կամուրջներ | | | | | 3 | |
| 6) Կամուրջ Աբովյան-Խաչատրյան փողոց | | | | | 1 | |
| 7) Էլ. Ցանցի շենք | | | | | 1 | |
| 8) F-530 կիսախողովակներ հետադարձի | | | | | 120 գծմ | |
| 9) Անվտանգության տեսախցիկ DAHUA | | | | | 2 | |
| 10) Անվտանգության տեսախցիկ DAHUA | | | | | 1 | |
| 11) Սառնարան Hisense RD28DR4s Silver | | | | | 1 | |
| 12) Տեսահսկող տեսախցիկ di-1200 | | | | | 2 | |
| 13) Կոշտ սկավառակ ITB | | | | | 1 | |
| 14) Router Tenda | | | | | 1 | |
| 15) Monitor LJ W22439 | | | | | 1 | |
| 16) Monitor AOC 185LED | | | | | 3 | |
| 17) Համակարգիչ Intel Samsung | | | | | 3 | |